

տեն հողէ նկանակներէն ալ իբրեւ համադամի տեղ :

Երգեօք արուեստական ախորժակ մ'է ասիկայ՝ նախ անօթութենէն պրգուում ու ետքը վարժութիւն եղած, թէ հողը սնունդ տալու զօրութիւն ունի, դեռ երկար փորձերու կարօտ է այս բանս ստուգելու . այս միայն ստոյգ է որ () գոմմաքը աղտեղի և տգեղ ժողովուրդ մըն են՝ որ իրենց կերակրոյն վրայ շատ համարմունք չի տար :

() րենոք գետին բերնին մօտ մէկ ազատ ժողովուրդ մ'ալ կայ ուրիշ եզական սովորութեամբ մը, աս ժողովուրդը Վուարանի կ'ըսուի . անձրեային եղանակներուն երբոր երկիրը ջրով կը ծածկի՝ կապիկներու պէս ծառերուն վրայ կը բնակին : Հովանոցաձև մալրիտեան ըսուած արմաւենին թէ կերակրոյ և թէ բնակութեան կը ծառայէ իրենց . ասոր տերեւոյն ջրերովը խտրներ կը հիւսեն, և ծառէ ծառ կը ձգեն : Եւ կախաղանաւոր բնակարանները մասամբ կաւով գոցուած են . կրնիկները աս թաց հողին վրայ քիչ մը կը թակ կը վառեն կերակրի համար . գիշերատեն գետին վրայ նաւարկող ճանապարհորդը օդին մէջ բարձր շարուած կարգաւ բոցեր կը տեսնայ : Ետեն կուգայ որ մաւրիտեան արմաւենւոյն ծովը սակուի նման ալիւր մը կ'ըլլայ՝ որ բարակ հացի նման կը չորցնեն . բոյսին հիւթէն ալ թթուեցնելով ախորժակ համե զօրաւոր գինի մը կը շինեն . իսկ պտուղները՝ ինչպէս ուրիշ այրեցած գօտւոյն տակի եղածները՝ կը զանազանին համով ըստ զանազան աստիճանի իրենց հասունանալուն :

Եսպէս, կ'ըսէ Հումպոլդ, մարդկային քաղաքականութեան ամենէն վարի աստիճանին մէջ գտուող ժողովուրդը իր կենաց եութիւնը մէկ ծառի մը հետ կապած է, նման ան միջատներուն որոնք միայն ծաղկի քանի մը մասերով կ'ապրին :

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

(արժան օրացոյց :

ՎԱՆԱԴԱՅ | Կիլլենոյցի 25 տարուան գեղացի մը (Յովսէփ Վիւսոն անունով, որ այնչափ միայն ուսումնական դաստիարակութիւն ունեցեր է՝ ինչ որ գեղերը գեղացի տղոց կը տրուի, զարմանալի ձեռագործ մը շիներ լումբուցներ է աս մօտերս . այնպիսի ձեռագործ մը՝ որ շինելու համար ուսումնականութեան ու մեքենականութեան շատ ընդարձակ տեղեկութիւններ հարկաւոր էին :

Փայտէ ժամացոյց մ'է աս ձեռագործը, որ հնարողը արժանապէս (արժան օրացոյց կ'անուանէ : Ետ ցուցակներ ունի, որ կը ցուցնեն ժամը, վայրկեանը, երկվայրկեանը, շաբթուն օրը, ամսուն օրը, տարւոյն ամիսը, տարին, դարը, արեւուն ելլալն ու մտնալը, լուսնին ելլալն ու մտնալը, և այլն . բոլորն ալ ամենայն ճշդութեամբ :

Ենիւները ապակիի մը ետեւ այնպիսի վարպետութեամբ շարուած են, որ լաւ կ'երեւայ թէ ինչպէս բարակ է բանուածքը ու շարժմունքները կանոնաւոր : (ցուցակներուն ու անիւներուն վրան գրեթէ մէկ մեթրի երկայնութեամբ մակերեւութի մը վրայ գեղեցիկ զարդարուն սրահ մը կ'երեւայ, մէջ տեղը խցիկներ, երկու ծայրերն ալ մէկ մէկ աշտարակ : յամը զարնելու ատենը խցիկին մէկուն դուռը կը բացուի ու մահը իր մանգաղովը դուրս կ'ելլայ, (Խուս ալ խարազանը ձեռքը ետեւէն զինքը կը հալածէ ու ուրիշ խցիկի մը մէջ կը հրէ ու դուռը վրայէն կը գոցէ : յամացոյցը երբոր առջի զարնուածքը կ'ընէ՝ պզտիկ աքաղաղ մը աշտարակներուն մէկուն վրայի խաչին վրայ կեցած՝ թւերը կը թօթվէ ու վիզը կ'երկնցնէ իբրեւ թէ ձայն կը հանէ : յամզարնելը լումնալէն ետեւ՝ մահն ու (Խուս նորէն իրենց խցիկները կը դառնան, ու ներս մտնալէն ետեւ դուռներնին ալ կը գոցեն : () րը իրեք ան-

գամ առաւօտեան ու իրիկուան վեցին , ու կէս օրը՝ ճարտարագործ արուեստով մը՝ Նրեշտի Կէառն զանգակին ձայնը կը լսուի : Ինչ ատենը Բստուածածին իր խցիկէն դուրս սրահը կ'ելլէ ու աղօթարան մը կ'երթայ աղօթք ընելու համար . ան միջոցին աշտարակներուն մէկէն հրեշտակ մը վար կ'իջնայ , թեւերը կը շարժէ ու կ'երթայ սուրբ Բստուածածնայ մօտ կը կենայ , կը ծռւի առջևը ու կարծես որ իրեն այն հրաշալի ողջունատրութիւնը կ'աւետաւորէ : Սուրբ Բստուածածին կը խռովի , կը դողայ , ու յայտնի կ'երևնայ իրեն երկիւղալից զգացմունքը : Բստուածածինը կ'ըլլայ Նրեշտի առջի իրեք զարնուածքին . ու ետքը հրեշտակը աշտարակը կ'երթայ , ու նորէն երկու անգամ ալ նոյն շարժումները և նոյն ողջունատրութիւնը կը կատարուի :

Բստուածածին հրաշալի ձեռակերտին բանուածքը ոչինչ ընդհատ զարմանալի է հնարագործութենէն , ու բոլորն ալ նոյն գեղացիին ձեռագործն է : Ինչիւնեքն ումանք փայտէ են , ումանք ալ պղինձէ :

Խեղճ գեղացին ցորեկը իր արտը կ'աշխատէր , ու գիշերը կանթեղի մը տխուր լուսով իր ցորեննոցին մէկ անկիւնը քաշուած մեծ համբերութեամբ իր ժամացոյցը կը շինէր : Հազար դժուարութիւն դէմն ելած՝ ամենուն ալ յաղթեր է իր երկայնամութեամբ . դժուարութիւնները ոչ իր համբերութիւնը և ոչ իր արիւնքութիւնը յոգնեցուցին :

Բայտիսի գեղացին այն ընտիր մարդկանց կարգը կը սեպուի որ գիտութիւնները ու արուեստները կը գուշակեն առանց սորված ըլլալու : Օարմանալին աս է որ Վիւսոն չէ թէ միայն ամենայն բան ինք շինած է , հապա նաև անոնք շինելու համար հարկաւոր գործիքներն ալ իր ձեռագործն են . անանկ որ միանգամայն աստղաձագործ է , ճախարակագործ ու ժամագործ . և այնպէս կատարեալ է իր ձեռագործը որ

ինչ և իցէ մեծածախ դահլիճներու ազնուագոյն զարդը կրնայ ըլլալ :

Իմէն օր գնացող գնացողի են այսպիսի հրաշալի արուեստաւոր ու ձեռագործ տեսնալու :

— ԳԵՂԱՐՈՒԹԻՒՆ —

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՃԱՓՈՆԱՅԻՔ հոգեփոխութեան ազնունքն ընդունելով՝ չորքոտանեաց միջին ուտեր և մասնաւոր ինամբ մը ունին շանց վրայ , անոր համար բոլոր քաղաքներն ու գեղերը շներով լեցուն են : Եւ պատմեն թէ իրենց մէկ ինքնակալը շնիկ համաստեղութեան տակ ծնած ըլլալով մասնաւոր ինամբ ունեցաւ շանց վրայ , ու հրաման հանեց որ իւրաքանչիւր թաղ այսչափ թուով շուն պահէ . անոր համար ամէն փողոց մանր տնակներ շներեցին անոնց , և ով որ շուն մը սպաննէր՝ մահ էր պատիժը : Իսկ երբ որ շուն մը կը սատկէր՝ պարտքիւն էին դին շալկել ինչուան լեռան մը ծայրը տանիլ ու հոն թաղել : ()ը մը մարդուն մէկը շան մը սատակը տանելու ատեն յոգնած՝ սկսաւ թաղաւորին ծննդեան օրը նգովել և իրեն անխելք հրամանը վար զարնել . հոն իր ընկերը կեղծ բարկութեամբ մը ասոր վրայ կը փրթի ու կ'ըսէ , մանաւանդ թէ պէտք է աստուածներուն շնորհակալ ըլլալ որ մեր ինքնակալին ծնունդը շնիկ համաստեղութեան տակ հանդիպցուցին . հապա թէ որ ձի՝ համաստեղութեան տակ հանդիպցընէին՝ այսօր ինչ պիտի ընէիր :

1 Ճափոնացոյց համաստեղութեան մէկն ալ ձին է , վասն զի այսպէս կը համբէն . Մուկն , Յուլ , Վագր , Եսպաստակ , Վիշապ , Օձ , Ձի , Խոյ , Կապիկ , Աքաղաղ , Էռն , Խոզ :